Ա/Ձ Սամվել Համբարձումյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 723 լիցենզիան վերաձևակերպելու մասին

2022-08-09

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 133 Ա
09.08.2022

Ա/Ձ Սամվել Համբարձումյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 723 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 36-րդ կետով, *հաշվի առնելով այն, որ* Ա/Ձ Սամվել Համբարձումյանը 27.07.2022թ. դիմել է ՀՀ կենտրոնական բանկ՝ իրեն տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի օգոստոսի 5-ի թիվ 32 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

Վերաձևակերպել Ա/Ձ Սամվել Համբարձումյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 723 լիցենզիան՝ կապված Սամվել Համբարձումյանի բնակության վայրի հասցեափոխության հետ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

2022 թ. օգոստոսի 15, ք. Երևան